ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2019 թ. հունիսի 3-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 2բ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին 33 ծնող, դասվար Արմենուհի Սարգսյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ՝ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում՝

1. Աշակերտների տարեվերջյան առաջադիմության արդյունքների ամփոփումը:
2. Էքսկուրսիայի կազմակերպումը:

1. **Լսեցին.-** *Աշակերտների տարեվերջյան առաջադիմության արդյունքների ամփոփման հարցը:*

Ելույթ ունեցավ դասվար Արմենուհի Սարգսյանը՝ ներկայացնելով երկրորդ կիսամյակում կատարած աշխատանքները: Յուրաքանչյուր ծնողի ներկայացվեց իր երեխայի առաջադիմությունը,տեղեկացան՝ թե ինչ թերացումներ կան աշակերտների մոտ և ինչ պետք է անեն ամառային արձակուրդներին,որպեսզի խնդիրները վերանան: Ամփոփվեց տարեկան գնահատականները :
Դասարանում սովորում են տասը գերազանց աշակերտ՝

Ավագյան Մարի Արմանի
Գալստյան Գոռ Հայկի
Թումանյան Արթուր Բագրատի
Հովհաննիսյան Էլինար Գարիկի
Միքայելյան Էրիկ Միքայելի
Պետրոսյան Ալինա Սամվելի
Սարգսյան Արամ Արմենի
Տիգրանյան Դավիթ Գևորգի
Քոչարյան Մարիա Նարեկի
Քոչարյան Սիմոն Վարդանի և տասնչորս ուսման առաջավոր:

Որոշեցին.

Ամառային արձակուրդներին կատարել տրված հանձնարարությունները,լինել ուշադիր ձեռագրերի նկատմամբ,շատ ժամանակ տրամադրել ընթերցանությանը:

2. **Լսեցին.-** *Էքսկուրսիայի կազմակերպման հարցը:*

Դասվար Արմենուհի Սարգսյանի առաջարկը՝ էքսկուրսիան կազմակերպել <<Բարդիների պուրակ>> հանգստյան գոտում:

Որոշեցին.

Առաջարկը ընդունվեց բոլոր ծնողների կողմից: Կատարելով ծախսերի հաշվարկ՝ որոշեցին հավաքել 3000-ական դրամ գումար էքսկուրսիան լիարժեք կազմակերպելու համար: Այդ աշխատանքները հանձնարարվեց ծնողկոմիտեի անդամներին:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Անի Բաղալյան

Քարտուղար՝ Ժասմենա Անդրեասյան